



## Երևանի քաղաքապետարանի կոչին և Ապրիլի 18-ին՝ Հուշարձանների ու տեսարժան վայրերի միջազգային օրվան ընդառաջ

Մաքուր և կանաչապատ մայրաքաղաք ունենալու Երևանի քաղաքապետարանի կոչին, ինչպես նաև Ապրիլի 18-ին՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան ընդառաջ այսօր՝ ապրիլի 14-ին Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարանի Էրեբունի, Շենգավիթ և Կարմիր բլուր հնավայրերի տարածքում մաքրման և օժանդակ այլ աշխատանքներ իրականացրեցին մայրաքաղաքային գորամասի 4-րդ գնդի զինվորները՝ գորամասի հրամանատար, գնդապետ Սմբատ Գրիգորյանի ղեկավարությամբ:

Նախորդ տարիներին ՀՀ պաշտպանության նախարարության և արգելոց-թանգարանի միջև ձևավորված գեղեցիկ և ուսանելի համագործակցությունը պայմանավորված է ինչպես Հայաստանի պատմամշակութային հուշարձանների տարածքներում մշտապես խնամքի և բարեկարգման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությամբ, այնպես էլ՝ հայրենիքի պաշտպանների դաստիարակման գործում ժառանգության ունեցած դերով:

Ողջունելով գորամասի 120 զինվոր-երիտասարդներին՝ արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանը նշեց, որ ունենալով լեռնային երկիր և անառիկ բնություն, դեռ նախապատմական ժամանակաշրջանում մեր նախնիները կերտել են բազմաթիվ բերդեր ու ամրոցներ՝ հաջող պայքար մղելով ազատության ու անկախության համար: Երևանը՝ շուրջ 3-հազարամյա մեր մայրաքաղաքը հենց անառիկ քաղաք-ամրոց է եղել Արին բերդ բլրին՝ Էրեբունի անվամբ: Նա մասնավորապես ընդգծեց Էրեբունի ամրոցի դերը մայրաքաղաքի դիմագծում և խորհրդանշական համարեց այն, որ մայրաքաղաքային գորամասն է արձագանքել արգելոց-թանգարանի նախաձեռնությանը:

Շեշտելով, թե հայրենասիրության և զինված ուժերի մարտունակության բարձրացման գործում որքան մեծ է ռազմապաշտպանական ժառանգության ճանաչման դերը և այն, թե մեր ռազմարվեստի մանրամասների լուսաբանման համար որքան կարևոր են հնագիտական պեղումներից հայտնաբերված գտածոները՝ արգելոց-թանգարանի փոխտնօրեն Ա. Մեշինյանը զինվորներին ծանոթացրեց «Էրեբունի» թանգարանի մշտական ցուցադրությանը և հնավայրին:

Այսպիսով մայրաքաղաքային գորամասի 4-րդ գնդի 120 զինվորներ իրենց ծառայության մեկ օրն անցկացրեցին «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարանում՝ իրականացնելով հողի փխրեցման, չոր խոտերի հավաքման, այրման և տարածքի՝ մոլախոտերից ազատման աշխատանքներ:

Պատմամշակութային հուշարձաններն ու վայրերը թանկ են ու անփոխարինելի, որովհետև դրանք նույնանում են հայրենիքի հետ: Կասկածից վեր է, որ ժառանգությունը հզոր ռեսուրս է՝ ժամանակակից երիտասարդի և հայրենիքի զինվորի բարոյական կերպար ձևավորելու ճանապարհին:

***«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց թանգարան***